



ԳԱՆԱՏԱՐԱՅՈՒՆ ԹԵՄ ԴԻՕՇԵՍ ԱՐՄԵՆԻԵՆ ԴՍ ԿԱՆԱԴԱ

ԿԱՆԱԹԵՂ

ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿԼՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GREGOIRE L'ILLUMINEUR DE MOTRÉAL

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ԿԻՐԱԿԻ, 29 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2019

143

DIMANCHE, 29 Décembre 2019

2. Կիրակի Յիսնակի 6-ème Dimanche de l'Avent



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Աստուածաշունչի Ընթերցումներ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ
ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ
ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ (7.11-25)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (19.12-28)

Les lectures de la Bible d'aujourd'hui

HÉBREUX 7.11-25

LUC: 19.12-28

Պատարագիչ եւ քարոզիչ՝
ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ. ՔՀՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Հոգևոր Հովիւ

Célébrant:

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Prêtre Paroissial

Առաւօտեան Ժամերգութիւն - Ժամը 9:30-ին

Office Matines à 9h30

Ս. Պատարագ Ժամը - 10:30-ին

La Sainte Messe à 10h30

DIACRES – ACOLYTES

Chef de chœur: Sarkis Barsemian

Organiste: Houry Manougian

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԵՔՐՍՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐՈՒՍՏ ՆԱՍՄԿԷՆ 7.11-25

11Ուրեմն, եթե կատարելութիւնը Ղեւտացիներու քահանայութեամբ ըլլար, (քանի որ ժողովուրդը Օրէնքին տակ դրուեցաւ անոր ատենը,) ա՛լ ի՛նչ պետք կար որ ուրի՛շ քահանայ մը ելլէր՝ Մեյքիսեդէկի կարգին համեմատ, եւ չկոչուէր Ահարոնի կարգին համեմատ: 12Արդարեւ՝ քահանայութեան փոփոխումով՝ հարկ էր որ փոփոխութիւն ըլլար նաեւ Օրէնքին: 13Եւ իրաւ եղաւ, որովհետեւ ան՝ որուն մասին կ'ըսուին այս բաները, կը պատկանէր ուրի՛շ տոհմի, որմէ ո՛չ մէկը մօտեցած էր զոհասեղանին. 14քանի որ յայտնի է թէ մեր Տէրը սերած է Յուդայի տոհմէն: Իսկ այդ տոհմին մասին Մովսէս ոչինչ ըսաւ՝ քահանայութեան վերաբերեալ: 15Ասիկա ա՛լ աւելի յայտնի է, քանի որ Մեյքիսեդէկի նմանութեամբ ուրի՛շ քահանայ մը կ'ելլէ, 16որ եղած է ո՛չ թէ մարմաւոր պատուերի մը Օրէնքին համաձայն, հապա՛ անքակտելի կեանքի մը զօրութեան համեմատ:

17Որովհետեւ կը վկայէ. «Դուն յաւիտեան քահանայ ես՝ Մեյքիսեդէկի կարգին համեմատ:

18Արդարեւ նախկին պատուէրը կը ջնջուի իր տկարութեան ու անշահեկանութեան համար, 19(որովհետեւ Օրէնքը ոչի՛նչ կատարեալ ըրաւ,) եւ անոր տեղ կը մտնէ լաւագոյն յոյս մը՝ որով կը մօտենանք Աստուծոյ: 20Եւ քանի որ ասիկա չեղաւ առանց երդումի, (որովհետեւ անոնք քահանայ եղած են առանց երդումի, 21իսկ ասիկա՝ երդումով, անո՛ր միջոցով՝ որ ըսաւ իրեն. «Տէրը երդում ըրեր է ու պիտի չզոջայ. «Դուն յաւիտեան քահանայ ես՝ Մեյքիսեդէկի կարգին համեմատ»»), 22Յիսուս երաշխաւոր եղաւ լաւագոյն ուխտի մը:

23Ի՛րապէս շատ եղած են քահանաները, քանի որ մահը կ'արգիլէր որ անոնք միշտ մնան: 24Բայց ասիկա ունի անփոփոխ քահանայութիւն, որովհետեւ յաւիտեան կը մնայ: 25Ուստի կարող ալ է կատարելապէս փրկել անոնք՝ որ իրմով կու գան Աստուծոյ. որովհետեւ ինք միշտ կ'ապրի՛ անոնց բարեխօս ըլլալու համար:

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 19.11-28

11Երբ անոնք կը լսէին այս բաները՝ առակ մըն ալ ըսաւ, քանի որ ինք Երուսաղէմի կը մօտենար եւ անոնք կը կարծէին թէ Աստուծոյ թագաւորութիւնը անմիջապէս պիտի երեւնար: 12Ուրեմն ըսաւ. «Ազնուական մարդ մը զնաց հեռաւոր երկիր մը՝ իրեն թագաւորութիւն ստանալու եւ վերադառնալու: 13Իր տասը ծառաները կանչելով՝ տասը մասս տուաւ անոնց, ու ըսաւ անոնց. «Շահարկեցէ՛ք՝ մինչեւ որ գամ»: 14Անոր քաղաքացիները կ'ատէին զայն, եւ պատուիրակութիւն մը դրկեցին անոր ետեւէն՝ ըսելով. «Չենք ուզեր որ ասիկա թագաւորէ մեր վրայ»: 15Բայց երբ ան վերադարձաւ՝ թագաւորութիւնը ստանալով, իրեն կանչեց այն ծառաները՝ որոնց դրամ տուեր էր, որպէսզի գիտնայ թէ ո՛վ ինչպէս շահագործած էր: 16Առաջինը եկաւ եւ ըսաւ. «Տէ՛ր, քու մնասո՞ տասը մասս վաստկեցաւ»: 17Ան ալ ըսաւ անոր. «Ապրի՛ս, բարի՛ ծառայ. որովհետեւ ամենափոքր բանին մէջ հաւատարիմ եղար, տա՛սը քաղաքի վրայ իշխանութիւն ունեցիր»: 18Երկրորդը եկաւ ու ըսաւ. «Տէ՛ր, քու մնասո՞ հինգ մասս բերաւ»: 19Եւ ըսաւ անոր. «Դուն ալ հի՛նգ քաղաքի վրայ եղիր»: 20Ուրիշ մը եկաւ ու ըսաւ. «Տէ՛ր, ահա՛ քու մնասո՞ որ կը պահէի թաշկինակի մը մէջ ծրարած, 21քանի որ կը վախնայի քեզմէ. որովհետեւ դուն խիստ մարդ մըն ես, կը վերցնես չորած բանդ, եւ կը հնձես չտրմանածդ»: 22Ան ալ ըսաւ անոր. «Բերանո՛վդ պիտի դատեմ քեզ, չա՛ր ծառայ: Գիտէիր թէ ես խիստ մարդ մըն եմ, կը վերցնեմ չորած բանս ու կը հնձեմ չտրմանածս. 23ուրեմն ինչո՞ւ չտուիր իմ դրամս սեղանաւորներուն, որպէսզի եկած ատենս՝ տոկոսով պահանջէի զայն»: 24Քովը կայնողներուն ըսաւ. «Առէ՛ք ատկէ մնասը, եւ տուէ՛ք անոր՝ որ տասը մասս ունի. 25(Ըսին իրեն. «Տէ՛ր, ան տա՛սը մասս ունի».) 26որովհետեւ կը յայտարարեմ ձեզի թէ ամէն ունեցողի պիտի տրուի, ու չունեցողին՝ ունեցածն ալ պիտի առնուի իրմէ: 27Բայց այդ թշնամիներս, որոնք չէին ուզեր որ իրենց վրայ թագաւորեմ, բերէ՛ք հոս եւ մեռցուցէ՛ք իմ առջեւ»»:

Hébreux 7.11-25

11Si donc la perfection s'était trouvée dans la sacrificature Lévitique, (car c'est sous elle que le peuple a reçu la Loi) quel besoin était-il après cela qu'un autre Sacrificateur se levât selon l'ordre de Melchisédec, et qui ne fût point dit selon l'ordre d'Aaron. 12Or la Sacrificature étant changée, il est nécessaire qu'il y ait aussi un changement de Loi. 13Car celui à l'égard duquel ces choses sont dites, appartient à une autre Tribu, de laquelle nul n'a assisté à l'autel; 14Car il est évident que notre

Seigneur est descendu de la Tribu de Juda, à l'égard de laquelle Moïse n'a rien dit de la Sacrificature. 15Et cela est encore plus incontestable, en ce qu'un autre Sacrificateur, à la ressemblance de Melchisédec, est suscité; 16Qui n'a point été fait [Sacrificateur] selon la Loi du commandement charnel, mais selon la puissance de la vie impérissable. 17Car [Dieu] lui rend [ce] témoignage : tu es Sacrificateur ternellement, selon l'ordre de Melchisédec.

18Or il se fait une abolition du commandement qui a précédé, à cause de sa faiblesse, et parce qu'il ne pouvait point profiter. 19Car la Loi n'a rien amené à la perfection; mais [ce qui a amené à la perfection], c'est ce qui a été introduit par-dessus, [savoir] une meilleure espérance, par laquelle nous approchons de Dieu. 20D'autant plus même que ce n'a point été sans serment. Or ceux-là ont été faits Sacrificateurs sans serment; 21Mais celui-ci l'a été avec serment, par celui qui lui a dit : le Seigneur l'a juré, et il ne s'en repentira point : tu es Sacrificateur éternellement selon l'ordre de Melchisédec.

22C'est [donc] d'une beaucoup plus excellente alliance [que la remière], que Jésus a été fait le garant. 23Et quant aux Sacrificateurs, il en a été fait plusieurs, à cause que la mort les empêchait d'être perpétuels.

24Mais celui-ci, parce qu'il demeure éternellement, il a une Sacrificature perpétuelle. 25C'est pourquoi aussi il peut sauver pour toujours ceux qui s'approchent de Dieu par lui, étant toujours vivant pour intercéder pour eux.

Luc 19.11-28

12Il dit donc : un homme noble s'en alla dans un pays éloigné, pour se mettre en possession d'un Royaume, mais dans la vue de revenir. 13Et ayant appelé dix de ses serviteurs, il leur donna dix marcs d'argent et leur dit : Faites-les valoir jusqu'à ce que je vienne. 14Or ses citoyens le haïssaient : c'est pourquoi ils envoyèrent après lui une députation, pour dire : nous ne voulons pas que celui-ci règne sur nous. 15Il arriva donc après qu'il fut retourné, et qu'il se fut mis en possession du Royaume, qu'il commanda qu'on lui appelât ces serviteurs à qui il avait confié [son] argent, afin qu'il sût combien chacun aurait gagné par son trafic. 16Alors le premier vint, disant : Seigneur, ton marc a produit dix autres marcs. 17Et il lui dit : cela va bien, bon serviteur; parce que tu as été fidèle en peu de chose, aie puissance sur dix villes. 18Et un autre vint, disant : Seigneur, ton marc en a produit cinq autres. 19Et il dit aussi à celui-ci : et toi, sois établi sur cinq villes. 20Et un autre vint, disant : Seigneur, voici ton marc que j'ai tenu enveloppé dans un linge; 21Car je t'ai craint, parce que tu es un homme sévère; tu prends ce que tu n'as point mis, et tu moissonnes ce que tu n'as point semé. 22Et il lui dit : méchant serviteur, je te jugerai par ta propre parole : tu savais que je suis un homme sévère, prenant ce que je n'ai point mis, et moissonnant ce que je n'ai point semé; 23Pourquoi donc n'as-tu pas mis mon argent à la banque, et à mon retour je l'eusse retiré avec l'intérêt? 24Alors il dit à ceux qui

étaient présents : Otez-lui le marc, et donnez-le à celui qui a les dix. 25Et ils lui dirent : Seigneur, il a dix marcs. 26Ainsi je vous dis, qu'à chacun qui aura, il sera donné; et à celui qui n'a rien, cela même qu'il a, lui sera ôté. 27Au reste, amenez ici ces ennemis qui n'ont pas voulu que je régne sur eux, et tuez-les devant moi. 28Et ayant dit ces choses, il allait devant [eux], montant à Jérusalem.



Հոգեւոր Հովիւի Պատգամը

Յանուև Զօր եւ Որդւոյ եւ Զոգւոյն Սրբոյ, Ամէն

Այսօր տարեվերջի պատարագ կը մատուցենք. այսօր՝ այս սուրբ եւ անմահ պատարագի ընթացքին, քննութեան առնելով կ'ամփոփենք մեր միտքերը, խօսքերն ու գործերը, մեր յարաբերութիւնները Աստուծոյ եւ մարդոց հետ: Մենք գիտենք, որ որուն ինչ ըրած եւ ըսած ենք՝ թէ՛ լաւ, թէ՛ վատ, թէ՛ բարի եւ թէ՛ չար, նոյնիսկ բան մը որ չենք ըրած, անտարբեր եղած ենք մեր նմաններու հոգերուն եւ կարիքներուն նկատմամբ, իրենց պատասխանն ու վարձքը պիտի ստանան Տիրոջ կողմէն: Զանի որ «անտարբերութիւնը ութերորդ մահացու մեղքն է», - կ'ըսէ Գարեգին Ա կաթողիկոսը: Մենք այսօր մեր ուշադրութիւնը կը կեդրոնացնենք ողջ տարուան կտրուածքով մեր սեփական վարքագիծին եւ մեր մեղքերուն վրայ: Ահա թէ ինչով կը տարբերի քրիստոնէայ մարդկութիւնը ողջ աշխարհէն: Աշխարհը տարբեր բաները կ'արժանացնէ իր ուշադրութեան: Աշխարհի փնտռողները զանազան են, քրիստոնէաներունը՝ տարբեր:

Աշխարհը սպանութիւններ կը գործէ յանուն խաղաղութան: Այսօրուան մարդկութեան կը մատուցուի տարբեր բարոյա-հոգեբանական արժեհամակարգ, եւ մարդուն կը ստիպեն որդեգրել ուրիշ հոգեկերտուածք, քրիստոնէութենէն հեռու հոգեմտաւոր տարբեր գաղափարներ ու արժէքներ: Կը քարոզուի մարդկային ազատութիւնը, բայց զուգահեռաբար մարդը անգիտակցօրէն կը դառնայ քրիստոնէութեան օտար, տարբեր գաղափարախօսութիւններու ստրուկը: Բոլորը կը խօսին արդարութենէն, բայց փաստը այն է, որ պատերազմներ կը մղուին, որուն զօրը կը դառնան բազմաթիւ կիներ, ծերեր եւ անմեղ մանուկներ: Գիտութեան եւ արուեստագիտութեան զարգացումը, նպաստելով մարդկային կենցաղի բարելաման, միաժամանակ նաեւ նորանոր չարիքներու սկիզբ կը դառնայ: Զրիստոնէան կանգնած է սեփական երեխային զանազան իրողութիւններէն հեռու պահելու դժուարագոյն խնդրին առջեւ: Մանուկը ինքն անզօր է տարբերակել «բնական երեւոյթի» տակ ներկայացող վտանգները: Հասարակական փոփոխութիւնները իրենց հետ փոխած եւ Նոյնիսկ արժեգրկած են քրիստոնէական ընտանիքի դարաւոր տիպարը: Զրիստոնէական ընտանիքի ըմբռնումները փոփոխող աշխարհին կողմէ այսօր կասկածի տակ կ'առնուին: Նոյնիսկ հաւատքը եւ հաւատքի կեանքը կը ծաղրուին: Նորագոյնին հասնելու եւ առաջնակարգ կենսակերպէն ետ չմնալու ձգտումները մարդկային հասարակութեան պատմութիւնը կ'ուղղորդեն դէպի անդունդը: Մարդը փոխանակ երկինք յառելու իր հայացքը, ախորժահամ երեւոյթներուն հետեւելով, կը կորսնցնէ իր արարչական պատկերը: Ան անտարբեր դարձած է ոչ միայն երկնային արքայութեան փնտռողներուն մէջ, այլ նաեւ երկրային կեանքի կենցաղավարութեան մէջ դարձած է անտարբեր, ազահ, բարոյական անարատութենէն զուրկ: Մինչդեռ իւրաքանչիւր անձ պարտաւոր է խորհելու իր երկրային առաքելութեան մասին: Աստուածաշունչը կ'ըսէ. «Բոլոր չարիքներուն արմատը արծաթասիրութիւնն է» (Ա Տիմոթէոս 6:10): Դեռեւս 1880-ական թուականներուն Աւետիս Ահարոնեանը կը պատմէ երկու եղբայրներուն մասին, որոնք հայրական տունէն առանձնանալով Նոյնիսկ սղոցով կը կիսեն մահճակալը: Մարդիկ զիրար կ'ոչնչացնեն՝ խլելով իրենց նմաններուն բարիքները: Մարդուն ազահութիւնը կը փակէ անոր խիղճին ձայնը, որուն միջոցաւ օժտած է զինք իր Արարիչը: Աշխարհը մարտահրաւերներ ունի մարդուն

համար, եւ քրիստոնեան անընդհատ կանգնած է իր հաւատքին պաշտպանութեան ինդրին առջեւ, աստուածային պատուիրաններուն կատարման դժուարութեան առջեւ: Երբեմն նոյնիսկ, կը թուի թէ, անհնար է ապրիլ այսօրուայ աշխարհին մէջ եւ կատարել Յիսուս Բրիստոսի պատուիրանները: Մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Բրիստոս կ'ըսէ. «Այստեղ, աշխարհին մէջ նեղութիւն պիտի ունենայք, սակայն քաջալերուեցէ՛ք եւ յաղթեցի աշխարհին» (Յովհաննէս 16:33): Աստուած Սուրբ Գիրքով միշտ մեզի կ'ըսէ, թէ ինչպէս պէտք է ապրին Աստուծոյ արարածները: Սակայն մարդը շարունակաբար կ'ընթանայ մեղքի ճանապարհով, անոր վկայութիւնն են ջրհեղեղը, Սողոմ-Գոմոր քաղաքներուն կործանումը: Ասոնք կը ցուցանշեն այն, որ Աստուած այլեւս չանդուրժեց մեղքի թագաւորութեան: Բայց Ան խոստացաւ այլեւս աշխարհը չկործանել, Իր Միածին Որդին ուղարկեց մարդկութեան փրկութեան համար, որպէսզի մարդը, յիշելով մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Բրիստոսին զոհաբերութիւնը, պատարագուիլը՝ ի քաւութիւն եւ ի փրկութիւն մեղաւոր մարդկութեան, հանապազ ձգտի նմանուիլ իր Տիրոջը եւ սէր, ներողամտութիւն եւ գթառատութիւն սերմանէ աշխարհին մէջ: Պօղոս առաքեալը կ'ըսէ. «Եւ ոչ մէկուն պարտապան մի՛ մնաք, բացի իրար սիրելէ, քանի որ ան որ կը սիրէ իր ընկերը, կը կատարէ օրէնքը: Մի՛ շնար, մի՛ սպաներ, մի՛ գողնար, սուտ մի՛ վկայեր, մի՛ ցանկար եւ ուրիշ ինչ պատուիրան որ կայ, այս խօսքին մէջ կը բովանդակուի, թէ՛ սիրէ՛ քու ընկերդ ինչպէս քու անձդ, սերը իր ընկերոջը չար բան մը չ'ըներ, սերն է օրէնքին լրացումը» (Յռոմեացիներ 13:8-10): Եկէք այսօր սուրբ պատարագի ընթացքին աղօթք բարձրացնենք մարդկային փորձութիւններուն համար, որոնց առջեւ կանգնած է մարդկութիւնը: Աղօթք բարձրացնենք առ Աստուած, որպէսզի Տէրը հեռու պահէ մեզի եւ մեր ընտանիքները չարին որոգայթներէն: Մենք պէտք է փայլինք իբրեւ Բրիստոսի լոյսը կրողներ, քանի որ Ինք Տէրը կ'ըսէ. «Եւ ճրագ վառելով կաթսային տակ չեն դներ, այլ՝ աշտանակին վրայ, եւ ան լոյս կու տայ բոլոր անոնց, որ տան մէջ են: Թող այդպէս փայլի ձեր լոյսը մարդոց առջեւ, որպէսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառաւորեն ձեր Յօրը, որ երկնքն է» (Մատթէոս 5:15,16): Աղօթենք մեզի, մեր հարազատներուն, մտերիմներուն ու հայրենակիցներուն համար, որպէսզի չարին թակարդը չիյնանք եւ հաւատարիմ մնանք մեր Աստուծոյ, պատուիրանապահութեան մէջ, չընկրկինք եւ չնահանջենք մեր

քրիստոնեական սկզբունքներեն: Չկորսնցնենք յաւիտեանական թագաւորութեան տեսլականը, իբրեւ Չինուորեալ եկեղեցի՝ առաջնորդուինք Յաղթանակած եկեղեցին ներկայացնող սուրբերուն բարեխօսութեամբ: Աղօթենք Աստուծոյ, որպէսզի սուրբ ծննդեան պահեցողութեամբ առաջնորդէ մեզ դէպի Յիսուս Մանուկը, որպէսզի կարենանք ընդունիլ Անոր մեր սիրտերուն եւ հոգիներուն մէջ: Գարեգին Ա կաթողիկոսը կ'ըսէ. «Մարդուն երջանկութեան ճանապարհը կը սկսի ապաշխարութեան մեկնակէտէն»: Մաքրենք մեր սիրտերը Տիրոջը հոն ընդունելու համար: Աղօթական կեանքով նախապատրաստուինք մեր Տիրոջ եւ Փրկիչին գալստեան: Անկախ այն բանէն, թէ աշխարհը ինչ կ'ընէ, մենք մոզերուն պէս հետեւինք աստղին եւ երթանք փնտռելու, գտնելու եւ երկրպագելու Անոր: Սիմէոն ծերունիին եւ Աննա մարգարեուհիին պէս խնդրենք Աստուծմէ, որ կեանքը չաւարտենք՝ առանց Տիրոջ ճանչնալու, Չաքեոս մաքսապետին նման ջանք չխնայենք Աստուծոյ Որդին տեսնելու համար, փոխենք մեր կեանքը բարիք ընելով եւ ըրած չարիքը փոխհատուցելով, աշակերտներուն պէս անձնուիրաբար եւ անմնացորդ հետեւինք Ճշմարիտ Վարդապետին, հարիւրապետին պէս հիացնենք Յիսուս Բրիստոսին մեր հաւատքով, Յովհաննէս առաքեալին նման միևնույն վերջին պահը հաւատարիմ մնալով եւ չքենք Անոր, քանի որ մեզի հետ է Տիրոջ օգնութիւնը. «Եւ ահա ես ձեզի հետ եմ բոլոր օրերուն միևնույն աշխարհի վախճանը» (Մատթէոս 28:20): Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Բրիստոսի եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեսեանսն. Ամէն:

Օրհնութեամբ՝

Տ. Դաւիթ քահանայ Մարգարեան

Հոգեւոր հովիւ

Résumé du Sermon

Une année se termine et il est temps des bilans, des évaluations, des rires et des larmes.

Nous avons plus de moyens de vivre que nos ancêtres mais aujourd'hui la raison de vivre nous manque.

Au cours de l'année nous avons augmenté nos péchés et peut-être nos biens matériels mais nous sommes sur terre pour la relation, l'amitié et la fraternité pour une vie définie sur un chemin que Notre Seigneur nous a ouvert.

Pauvreté, guerres, maladies nous entourent et à cela s'ajoute la détresse d'être chrétien pour rester fidèles aux Évangiles, le combat contre l'indifférence à la Parole de Dieu et le constat des persécutions, morales et physiques, de nos sœurs et frères un peu partout dans le monde.

Prions le Seigneur pour qu'Il nous guide vers le Bien,
Ouvrons nos cœurs pour recevoir Jésus car en observant tout ce qu'Il a prescrit
Il sera avec nous jusqu'à la fin du monde.

En Foi et en Prière
Père David Margaryan
Prêtre paroissial

Կիրակի, Դեկտեմբեր 29, 2019

Բարեկենդան Սուրբ Ծննդեան պահոց

Սուրբ Ծննդեան պահոցի Բարեկենդանը անփոփոխ կը նշուի Դեկտեմբեր 29-ին, այսինքն՝ Սուրբ Ծնունդէն 7 օր առաջ: Սուրբ Ծննդեան պահոցը իր մէջ կ'ընդգրկէ նաեւ Նոր Տարուայ տօները մինչեւ Յունուար 5-ը՝ Ս.Ծննդեան ճրագալոյցը:



Sunday, December 29, 2019

Eve of the Fast of Holy Nativity and Theophany of Our Lord Jesus Christ (Fast of Christmas)

Eve of the Fast of Christmas is always celebrated on December 29, that is - 7 days before the Feast of Holy Nativity and Theophany of Our Lord Jesus Christ (Christmas) and is ended on January 5, the eve of the feast.

Կիրակի, Դեկտեմբեր 29, 2019

Ս. Ծննդեան պահոց

Ս. Ծննդեան նախորդող մէկ շաբաթը պահոց շրջան է:

Դեկտեմբեր 29-ի երեկոյէն մինչեւ Յունուար 5-ի երեկոյ մարդիկ պահք կը պահեն: Այդ ընթացքին կ'օգտագործուի բացառապէս բուսական ծագում ունեցող սնունդ:



Պահեցողները պահքի շրջանէն դուրս կու գան Յունուար 5-ի երեկոյեան, երբ եկեղեցւոյ մէջ կը մատուցուի Ս. Ծննդեան ճրագալոյցի Պատարագ եւ կը տրուի Ս. Ծննդեան Աւետիսը:

Մարդիկ գիրար կ'ողջունեն «Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ, Օրինեալ է Յայտնութիւնն Քրիստոսի»:



Արդեօք Գիտէի՞ք թէ.-

- **Ի՞նչ կը պատմէ Ս. Պօղոս առաքեալը Ս. Հաղորդութեան Խորհուրդի հաստատման մասին:**

ժամանակագրական առումով Ս. Հաղորդութեան խորհուրդի հաստատման մասին ամենահին տեղեկութիւնը պահպանուած է Ս. Պօղոսի՝ շուրջ 55 թ. կորնթացիներուն գրած առաջին նամակին մէջ, քանի որ գրութեամբ առաջին անտարանը՝ Մարկոսինը, գրուած է աւելի ուշ՝ 64-70 թուականներուն: Չնայելով թէ Ս. Պօղոս ինք անձնապէս մասնակցած չէ Վերջին ընթրիքին, բայց իր գրածին առաւել արժանահաւատութիւն եւ ստուգութիւն հաղորդելու համար կը շեշտէ, որ այդ ամէնը ինք Տիրոջմէն ստացած է: Սա կը նշանակէ, որ ան կա՛մ Յիսուսէն անձնական յայտնութիւն ստացած է, կա՛մ ալ անոր հաղորդածը կը հաստատէ եւ կը վկայէ Վաղ Եկեղեցոյ կեանքին մէջ Ս. Հաղորդութեան խորհուրդի անառարկելի հեղինակութեան մասին: Ահա թէ ան ինչ կը գրէ. « Ես ընդունեցի Տիրոջմէն, ինչ որ աւանդեցի ձեզի. այն, որ Տէր Յիսուս, այն զիշերը, երբ մատնուեցաւ, հաց վերցուց, գոհութիւն մատուցեց, կտրեց եւ ըսաւ. «Այս է Իմ Մարմինս, որ ձեզի համար է. առէ՛ք այս Իմ յիշատակիս համար»: Նոյն ձեւով ալ ընթրիքէն յետոյ վերցուց բաժակը եւ ըսաւ. «Այս բաժակը նոր ուխտ է Իմ Արիւնովս. առէ՛ք այս Իմ Յիշատակիս համար, քանի անգամ ալ որ խմէք»: Քանի անգամ այս հացը ուտէք եւ այս բաժակը խմէք, պատմեցէ՛ք Տիրոջ մահը, միչէւ որ Ան գայ (Ս Կորնթ. 11.23-26):

CROYEZ-VOUS AU PÈRE NOËL ?

De par le monde, nombreux sont les peuples qui à l'occasion du Nouvel An font du vieillard à la barbe blanche et au cœur tendre le héros des fêtes qu'ils affublent de noms divers tels que Père Noël, Tsmer Bab (père hivernal), Gaghand Baboug (Papa Noël), Santa Claus... Comme on le sait, avant même d'accepter le christianisme, les Arméniens avaient l'habitude de fêter le Nouvel An, alors appelé « Navasarte » ou Amanor (Nouvel An), ou alors Gaghand... Lors de ces fêtes Gaghand Baba ou Papa Noël était l'invité chéri des enfants comme des adultes. Il était considéré comme étant le garant du bien-être des foyers arméniens en leur apportant toujours la joie ainsi que des douceurs à tous les membres de la famille.

Par la suite, avec le christianisme, en Arménie, cette coutume fut délaissée au profit de la notion de Gaghand Baboug (Gaghand papa) ou Bartev Baboug qui n'est autre que la représentation du Catholicos Saint Sahag Bartev (IV^{ème} siècle). Que nous croyions ou pas au Père Noël, force est de constater que tout comme Saint Sahag en Arménie, Saint Nicolas, son équivalent en Europe, est un personnage historique de la même époque qui aurait réalisé des choses merveilleuses. Ce nom renvoie, avec une légère différence, à l'appellation anglaise du père Noël : Santa



Claus. Saint Nicolas est réputé pour ses œuvres de bienfaisance, au point d'être au centre de nombreuses légendes chrétiennes qui soulignent l'humilité avec laquelle il aidait les pauvres et les désespérés avec une grande discrétion. A tel point qu'il préférait glisser ses présents et ses pièces d'or en cachette par la cheminée. C'est pourquoi, aujourd'hui encore le Père Noël, habillé comme l'Évêque Saint Nicolas avec sa crosse et affublé d'une longue barbe blanche, continue toujours de distribuer ses cadeaux par la cheminée.

Սուրբ Ծնունդ



...հետևանքը



պատճառը...

POURQUOI L'ÉGLISE ARMÉNIENNE FÊTE NOËL LE 6 JANVIER

Les rites de l'Église arménienne en général, et de la célébration de la Sainte Nativité en particulier, ont conservé une des traditions les plus anciennes. Tout d'abord, à la différence de la majorité des chrétiens dans le monde, qui fêtent Noël le 25 décembre, selon l'ancien ou le nouveau calendrier, l'Église Arménienne a toujours fêté Noël le 6 janvier. Pourquoi? Cette tradition est fondée au 1er siècle, sur

le témoignage de Saint Jacques, Frère du Seigneur

(le cousin de Jésus). C'est ce jour-là que la Sainte Nativité était célébrée par toutes les églises à l'origine. Mais, en voulant supplanter en Europe les fêtes païennes dédiées aux divinités du soleil, l'Église de Rome décida, à partir du 4ème siècle, de déplacer cette fête du 6 janvier au 25 décembre, jour de l'adoration du soleil.

L'Église arménienne n'a jamais suivi cette modification restante aujourd'hui la seule Église qui fêtent Noël le 6 janvier.





Սարկաւագագիրք



Երբ օճախիդ մէջ դնես եղէնին, մշտադալար անմահութիւնը յիշէ, որ քու եկանքդ մտաւ Յիսուսի Ծնունդով:



Երբ աստղը շողայ ծառի գագաթին, յիշէ՛ մեծ աստղը Բեթղեհէմի, որ ցոյց կու տար Փրկութեան ուղին:



Երբ տօնածառէն կախես գունդերը կարմիր, գունդ-գունդ արիւնը Քրիստոսի յիշէ՛, որ վար կը յորդէր փրկութեան խաչէն՝ ի գին քու կեանքիդ:



Երբ շէմքդ զարդարես պսակով ծաղկեալ, յիշէ՛ չարչարանքի պսակը փուշէ, որուն հետ թագադրուեցաւ Արքան գթութեան:



Երբ հրեշտակ կախես տանդ անկիւնը, յիշէ՛ հրեշտակներուն, որ աւետեցին սկիզբը Փրկութեան եւ «Փառք ի բարձունս»:



Երբ նուէրներդ բաշխես բոլորին, յիշէ՛ մոգերուն, որ Արեւելքէն ընծաներ բերին՝ երկրպագելով Նորածին Փրկիչին:



Ու երբ որ ուրախ գոչես ամենուն՝ «Շնորհաւոր ըլլայ...», յիշէ՛ ՇՆՈՐՀԸ այն, որ Սուրբ Ծնունդով շնորհուեցաւ ամենուն՝ ինձի, քեզի, աշխարհին:

Սուրբ Ծնունդ

Շաբթուայ խորհրդածութիւնը

- Կը յիշեմ, երբ երիտասարդ էի, տարեց վանականի մը հարցուցի. «ինչո՞ւ կեանքը այսքան դժուար է»: Ան պատասխանեց. «Կեանքը դժուար չէ: Դուն դժուար ես: Կեանքը խաղաղութիւն է: Կեանքը Աւետարան է: Բայց դուն չես ապրիր Աւետարանով, եւ այդ է քու խնդիրներուդ պատճառը:

Ուղղափառ վարդապետ

Յովակիմ վրդ. Պարր

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ
Մայր Տաճարի Կիրակնօրեայ Վարժարանը կարիքն ունի
ուսուցիչներու՝ դասաւանդելու գծագրութեան դասընթացքներ:

Հետաքրքրուողներէն կը խնդրուի հեռաձայնել
քարտուղարութեան՝ (514) 279-3066
տուեալները ուղարկել հետեւեալ Ե-Հասցէին
stgregorychurch@gmail.com

Շնորհակալութիւն

ԱՌ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ՊԱՇՏՈՆԻ

Մեր սիրելի հաւատացեալներուն կը տեղեկացնենք, որ
Հոգեհանգստեան Պաշտօն խնդրելու համար Եկեղեցի
հեռաձայնել պահանջուած հոգեհանգստի թուականէն մէկ
շաբաթ առաջ

մինչեւ այդ շաբթուայ **Հինգշաբթի կ.ե. ժամը 5-ը:**

Ե-Հասցեով (e-mail) խնդրուող հոգեհանգստեան պաշտօն կամ որեւէ
այլ խնդրանք պէտք է **հաստատուին եւ վերստուգուին**
քարտուղարութեան հետ **հեռաձայնելով Եկեղեցւոյ գրասենեակ՝**
(514) 279-3066 թիվին:

Շնորհակալութիւն

ՆՈՒԻՐԱՏՈՒՄԻՆԻՆ ԵԿԵՂԵՅԻՅՑ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

**CHURCH DONATIONS
FOR THE MONTH OF: - DECEMBER 2019
RENOVATION FUND RAISING CAMPAIGNE:**

**Church Exterior Walls Fundraising Renovation
New Donators:**

Me Hrair Djihanian \$2500
Mr. & Mrs. Armand Kazandjian \$1500
Mr. & Mrs. Pedro & Adrine Oughourlian \$1000
Mr. & Mrs. Oskan Hazarabedian \$1000
Association Bolsahay Cultural Center \$1000
Mr. & Mrs. Krikor & Armine Kanar \$500
Mrs. Rita Karakas \$500
Mr. & Mrs. Kevork & Talin Kucuktasci \$250
Mr. Levon Simonyan \$250
Mr. & Mrs. Boghos & Sirvart Kichian \$200
Mrs. Silva Karaoghlanian \$120
Mr. & Mrs. Varouj & Hasmig Margossan \$100
Mr. & Mrs. Aret Tasciyan \$100
Mr. & Mrs. Robert Kechayan \$100

Offline donations & Online donations Total: \$4562

Grand Total: \$205,267,33

CHURCH:

Mr. Kevork Keorhadzian \$40,000.

CHURCH 49th ANNIVERSARY:

Dr. Vilma Derbekyan \$500

YOUGHAKIN CHRISTMAS:

Mr. Edouard Dermardiros \$250, Mr. & Mrs. Henry & Nayira Farmer \$200,
Mr. & Mrs. Boghos & Sirvart Kichian, Mr. Aram Minasyan, Mr. Edouard Minnetian,
Mr. Leon Kazandjian, Mr. Mardiros Baygin, Mr. & Mrs. Harutyun Seropyan, Mrs.
Luisa Fazliyan \$100, Mr. & Mrs. Hovsep & Mary Doramajian \$75, Mrs. Arpie
Gould, Mr. & Mrs. Hayk Bosnakyan, Mr. & Mrs. Asot Kasparyan, Mr. Antranig
Tatossian, Mr. & Mrs. Nighoghos Antonian, Mr. Hacatur Tor, Dr. Mihran
Dadourian, Mrs. Diana Tufenkjian, Mr. Vahan Momdjian, Mr. & Mrs. Robert &
Mari Sanlian \$50, Mrs. Alice Baltadjian, Mr. & Mrs. Garo & Nivart Paragamyan, Mr.
Herair Amirian, Mrs. Alis Afker, Mrs. Zarik Kisa, Mr. Sarkis Ekizian \$30,
Mr. & Mrs. Martin Marasliyan \$25.



**ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՄԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԷՈՐԻՉ
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN
ԿԻՐԱԿԱՍՏԻՑ ԺԱՍԵՐԳՈՒԹԻՒՆ**



Միրով կը յայտնենք, թե
Շաբաթ, 28 Դեկտեմբեր 2019-ի
երեկոյեան ժամը՝ 5-ին, երեկոյեան
(Կիրակամտից) ժամերգութիւն պիտի
կատարուի Մոնթրէալի Մբ. Գրիգոր
Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցւոյ մէջ:

Այսու կը հրաւիրենք մեր հաւատացեալները
ներկայ գտնուելու հոգեպարար այս
արարողութեան:

*Օրհնութեամբ՝
Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեան*



Ա. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻՉ ԱՊԱՋՆՈՐՄԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ-ՇՆՈՐՀԱՌՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ՇՆՈՒՂ-ԺԱՄՆԱԿԱՑՈՑՑ

ԱՄԱՆՈՐ - ՆՕՐԳՆԷԸ

Չորեքշաբթի, 1 Յունուար 2020, առաւօտեան ժամը 11:00-ին
Սուրբ եւ Անմահ Պատարագ
Պատարագիչ եւ քարոզիչ՝ - ԱՐժ. Տ. ՂԱԻԹ ԸՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ
Յաւարտ Ա. Պատարագի- **ՆՕՐԳՆԷԸԻ արարողութիւն եւ բաշխում**

ՃՐԱԳԱԼՈՑՑ Ա. ՇՆՆԴԵԱՆ - Կիրակի, 5 Յունուար 2020

Սկիզբ ժամերգութեան - երեկոյեան ժամը 5:30-ին
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ - երեկոյեան ժամը 6:00-ին
ԱՍՏՈՒԾԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ - երեկոյեան ժամը 6:30-ին
Ա. ԳՐԱՅԻՆ ԽԱՏՈՒԱԾՆԵՆ Կ'ՐՆԵՐՈՑԵՂԵՂ
Չ.Բ.Ը.Մ.-Ի ԱՐՄԵՆ ԶԷՊԷ ԱԼԵԸ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՎԱՐժԱՐԱՆԻ պշակեղոտները
Պատարագիչ՝ - ԱՐժ. Տ. ՂԱԻԹ ԸՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

ՏՕՆ ՇՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԾԱՅԱՅՆՑՆՈՒԹԵԱՆ

ՏԵՆՈՆ ՄԵՐՈՑ ՅԻՍՈՒՍԻ ԶՐԻԱՏՈՍԻ

ՀԱՆԴԻՍԱՌՈՐ Ա. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԶՐՕՐԳՆԷԸ

Երկուշաբթի, 6 Յունուար 2020

Սկիզբ ժամերգութեան - առաւօտեան ժամը 9:30-ին
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ – ժամը 10:30-ին
Պիտի պատարագէ եւ յաւուր պատշաճի քարոզէ՝
ԱՐժ. Տ. ՂԱԻԹ ԸՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ, Հոգեւոր Հովիւ
Յաւարտ Ա. Պատարագի՝ Զրօրինէջի Արարողութիւն
Կնքահայրութեամբ՝ Տիար **ՄԱՆՎԷԼ ՄԱՐԿՈՍԵԱՆ**
Յաւարտ Ա. Պատարագի **ՏՕՆԱԿԱՆ ԾԱԵԿԵՐՈՑԹ «Մարի Մանուկեան»**
սրահին մէջ Սուտքի նուէր՝ \$30

ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ



Հոգեհանգստեան Արարողութիւն – Երեքշաբթի, 7 Յունուար 2020,
Առաւօտեան ժամը 11:00-ին

ՏՆՕՐԳՆԷԸ

Ա. ՇՆՆԴԵԱՆ տօնին առիթով Տնօրինէջ փափաքող **Խաւատացեալներէն կը խնդրենք հեռաձայնել գրասենեակ՝ (514) 279-3066**





Cathédrale Arménienne St Grégoire l'Illuminateur

Bonne Année et Joyeux Noël

Calendrier de la période des Fêtes

Mercredi le 1er janvier 2020 à 11h00 Messe de Nouvel An

Célébrant : **le R.P. David Margaryan**

qui prononcera l'homélie

Bénédictioin et distribution des grenades

à la fin de la Messe



Dimanche le 5 janvier: Vigile de la Nativité et de la

Théophanie de N.S. Jésus Christ

Début des Célébrations à 17h 30 - Messe à 18 heures

Lectures Bibliques à 18h30 par les élèves École d'Armen Québec de l'U.G.A.B.

Célébrant - **le R.P. David Margaryan**, Prêtre de la Paroisse

qui prononcera l'homélie



Lundi le 6 janvier : Noël et Épiphanie

Début des Célébrations à 9h30

Messe solennelle à 10h30 - La Messe sera célèbre par

le R.P. David Margaryan, Prêtre de la Paroisse

Bénédictioin de l'eau, sous le parrainage de M MANVEL MARKOSYAN

à la fin de la Messe.

Après les Cérémonies un repas de Noël Arménien sera servi dans

la salle " Marie Manoogian" Prix de participation \$30



Mardi le 7 janvier 2020, à 11 heures, Office de requiem

pour tous les défunts

BÉNÉDICTION DE FOYER

Bénédictioin des foyers à l'occasion de Noël prière d'appeler

le secrétariat de l'Église (514) 279-3066





ՆՈՐՅՆԷՔ

**Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ
Մայր Եկեղեցի**

2020 թուականի Չորեքշաբթի,
Յունուար 1-ին
առաւօտեան ժամը 11:00-ին

Ամանորեայ Սուրբ եւ Անմահ Պատարագ.

Պատարագիչ եւ քարոզիչ`

Արժ. Տէր Դաւիթ քհնյ. Մարգարեան
Յաւարտ Սուրբ Պատարագի տեղի պիտի ունենայ

(13:00-ին) Նոսրինէքի արարողութիւն եւ բաշխուի մեր հայազն
հաւատացելոց

Բոլորդ սիրով կը հրաւիրենք աղօթակից ըլլալու 2020-ի անդրանիկ
Պատարագին եւ մասնակից` Նոսրինէաց բացառիկ կարգին:

Բոլորիդ ներկայութիւնը եւ աղօթքը ցանկալի են:

ՇՆՈՐՀԱԽՐ ԱՄԱՆՈՐ ԵՒ ԳԱՒԷ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Հոգեւոր հովիւ եւ Ծխական խորհուրդ

Cathédrale Arménienne St. Grégoire l'Illuminateur

La bénédiction des Grenades

Première Messe de l'An,

Mercredi, 1er janvier 2020 à 11 heures

Celebration et homélie par

le Rév. Père David Margaryan

Par la suite, la cérémonie de la bénédiction des Grenades et la
distribution aux fidèles aura lieu à 13 heures

Vous êtes cordialement invités à participer à ces célébrations pour
augurer un nouvel an de paix et de prospérité.

Votre présence et vos prières sont sollicitées.

Le prêtre et le Conseil paroissial





Dora Sakayan
Armenian Proverbs
in English Translation



Dora Sakayan
2 500 proverbes arméniens
traduits en français

ԳԻՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԷՍ

ՆՈՒԻՐՈՒՄԾ՝

Տօրթ, Դորա Սաքայեանի

ՎԵՐՁԵՐՍ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԳԻՐՔԻ՝

«2500 ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՍԼԵՐ

ՃՐԱՆՍԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ»

ՕՐՅՆՈՒԹԵԱՄԸ՝

Գերշ. Տ. Արգար Եպս. Յովակիմեանի

Բարեջան Առաջնորդ Գանատահայոց Թեմի

ԲԱՐՁՐ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՄԸ՝

Ն. Վ. Տիկ. Անահիտ Յարուփինեանի

Դեսպան Հայաստանի Հանրապետության
Գանատայի Մօտ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԸ՝

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ
Մայր Տաճարի

Կիրակի, 12 Յունուար 2019

Կ.Ե. Ժամը 1-ին Եկեղեցույ

«Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ:

Գինեձօն եւ հիւրասիրութիւն

Հրաւեր բոլորին

WEEK of
PRAYER
for CHRISTIAN UNITY
2020

SEMAINE de
PRIÈRE
pour L'UNITÉ DES CHRÉTIENS
2020



"They showed us
an unusual kindness."
(Acts 28:2)

« Ils nous ont témoigné une
humanité peu ordinaire »
(Actes 28:2)

January 19, 2020 / 19 janvier, 2020

DATE / DATE :

3:00pm/15h00

TIME / HEURE :


PLACE / LIEU :

Armenian Apostolic Church/
Église arménienne apostolique
615 Ave Stuart, Outremont QC H2V 3H2

weekofprayer.ca | semainedepriere.ca



METRO OUTREMONT



STATIONEMENT/PARKING





Յարգելի՛ ծնողներ, կը տեղեկացնենք, որ սոյն տարուայ սկսած Սեպտեմբեր ամիսէն նոր որակով եւ ընդայնուած ծրագիրով կը վերամէկնարկէ Մոնթրէալի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճարի կիրակնօրեայ վարժարանը իր 2019-2020 ուսումնական տարին:

Կիրակնօրեայ վարժարանը նոր ուսումնական տարեշրջանին կ'առաջարկէ հետեւեալ դասընթացքները.

1. Հայոց պատմութիւն եւ հոգեւոր գիտելիքներ _____
2. Մանկապատանեկան երգչախումբ _____
3. Շախմատ (ճատրակ) _____
4. Նկարչութիւն _____
5. Հայոց լեզու _____
6. Խօսքի մշակոյթ (թատրոն, ասմունք): _____
7. Դաշնակի Դասընթացք – (Մանրամասնութեան համար հեռաձայնել Վարժարանի պատասխանատուներուն՝ Հայկին եւ Ալինային): _____

Կը խնդրենք ընդունիլ առ ի գիտութիւն, որ կատարուած են որոշակի փոփոխութիւններ Կիրակնօրեայ Վարժարանի դասընթացքներու կազմակերպման ընթացքին մէջ.

- դասընթացքները պիտի սկսին ժամը 10:30-ին եւ կ'աւարտին՝ ժամը 14:00-ին, որոնց ընթացքին տեղի կ'ունենայ հիւրասիրութիւն:

- դասընթացքներու համար կ'ակնկալուի ձեր խորհրդանշական մասնակցութիւնը՝ 1 փոքրիկի պարագային ամիսը \$15, երկուքի պարագային՝ \$25, իսկ երեքի պարագային՝ \$33:

Միաժամանակ կը տեղեկացնենք, որ ներկայիս կը քննարկուի նաև փոխադրամիջոցի ապահովման հարցը (լրացուցիչ վճարման դիմաց):

Ձեր բոլոր առաջարկները կրնաք ներկայացնել

Կիրակնօրեայ Վարժարանի պատասխանատուներուն

անձամբ կամ հետեւեալ Ե-հասցէներով (e-mail)՝

haykpetrosyan80@gmail.com կամ alinabezhanyan1@yahoo.com:

Փոքրերու արձանագրութեան համար հեռաձայնել՝

Ալինա (438) 889-8167 Հայկ (514) 619-7098



615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/
stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



ԿԱՅԱԼԱՍՏԵՐԻ

Մեր սիրելի հաւատացեալներուն կը տեղեկացնենք՝
Թէ Ձեր ինքնաշարժերը ապահով կերպով կրնաք կանգնեցնել Bernard
փողոցին վրայ գտնուող

Centre Education des Adultes Outremont դպրոցին
կայանատեղիին (parking)-ին մէջ:

Հասցեն կարելի է տեսնել ստորեւ կցուած յայտարարութեան մէջ:

Նաեւ՝ կարելի է օգտագործել Stuart պողոտային կից գտնուող
Հիւսիսային Lajoie փողոցին երկու կողմերը:

Եկեղեցւոյ շրջակայքը գտնուող բոլոր փողոցներուն կարելի է
կանգնեցնել ձեր ինքնաշարժները, որոնք ի զօրու են մինչեւ

31 Յունուար 2020:

Շնորհակալութիւն
Ծիական Խորհուրդ

PARKING

We would like to inform you that you can safely park your cars
In the parking lot of the
Center Education des Adultes Outremont School
on Bernard street.

The address can be found in the attached map below.

You can also park on both sides of North Lajoie Street
adjacent to Stuart, the parkings are valid until **January 31, 2020.**

Thank you
Parish Council



ՀԱՅՑ. ԱՌԱՔ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻՉ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ
CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GREGOIRE L'ILLUMINEUR
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՐԻ

Միրելի հաւատացեալներ,
հաճոյքով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել
Bernard փողոցին վրայ գտնուող
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի
կայանատեղիին (parking) մէջ,
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.է. ժամը 3:



PARKING

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard stret, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. all the way to the 'Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

Adress : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2